<u>ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ</u>
<u>Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք</u>

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասից հանել «15 000 և ավելի բնակչություն ունեցող» բառերը:

Հոդված 2.

Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «15 000 և ավելի բնակչություն ունեցող» բառերը:

Հոդված 3.

Օրենքի 34-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից մասից հանել «15 000 և ավելի բնակչություն ունեցող» բառերը.

2) 2-րդ մասից մասից հանել «15 000 և ավելի բնակչություն ունեցող» բառերը:

Հոդված 4.

1. Սույն օրենքի 1-ին հոդվածը և 3-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ են մտնում մտնում 2020 թվականի հունվարի 01-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածը և 3-րդ հոդվածի 1-ին կետն ուժի մեջ են մտնում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմավորման պահից:

3. Մինչև 15 000 բնակչություն ունեցող համայքի ղեկավարն առաջին անգամ հայտարարագիր է ներկայացնում 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մինչև ոչ ուշ, քան 2020 թվականի մարտի 30-ը: